ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՌԱԴԻՈՖԻԿԱՑԻԱՆ

Մեծ աշխատանք է կատարվում մայրաքաղաքի նոր արվարձանների, ավանների, թաղամասերի, բնակելի տների և հասարակական շենքերի ռադիոֆիկացման ուղղությամբ։

Ավարտվել է Կիրովի անվան գործարանի բնակելի շենքերի ռադիոֆիկացիան։ Գործարանի բանվոր-ծառայողների բնակելի տների թաղամասում դրված է 612 ռադիոկետ։ Երեք ամսվա ընթացքում բուժական հաստատություններում դրվել է 300 ռադիոկետ։ Մինչև տարվա վերջը ռադիոկետերի թիվը քաղաքում ավելանալու է 4000-ով։

ԱԿՈՒՄԲԱՑԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ տարում շահագործման է հանձնվելու ևս 70 նորակառույց գյուղական ակումբ։ Նոր բարեկարգ ակումբներ կունենան Մարտունու, Ախտալի և ռեսպուբլիկայի շատ այլ շրջանների գյուղերը։

Գյուղական այդ ակումբներն ունենալու են հանդիսասրահներ՝ 400 հոգու համար, մեծ գրադարաններ, համապատասխան սենյակներ զանազան խմբակների աշխատանքի համար, կինոսարքեր և այլն։

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ԵՎ ՊԱՐԻ ԱՆՍԱՄԲԼԻ ԳԱՍՏՐՈԼՆԵՐԸ

Մեծ հաջողությամբ անցան Մոսկվայում Հայաստանի Պետական ֆիլհարմոնիայի հայկական ժողովրդական երգի և պարի անսամբլի գաստրոլները՝ Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Թաթուլ Ալթունյանի և բալետմեյստեր Էդուարդ Մանուկյանի ղեկավարությամբ։

Անսամբլի առաջին համերգները կայացան Զայկովսկու անվան համերգային դահլիճում և Միությունների Տան Սյունադարդ դահլիճում։

Մենակատարներ Ա. Ղազարյանը, Վ. Ռաշիդյանը, Ս. Պողոսյանը և մյուսները մեծ վարպետությամբ կատարեցին հայկական ժողովրդական հին պարերը։

Անսամբլի ելույթները ջերմորեն ընդունվեցին Մոսկվայի հասարակայնության կողմից։

Անսամբլը 40 համերգ տվեց Մոսկվայում, Լենինգրադում, Լատվիայի, Լիտվայի և Էստոնիայի մայրաքաղաքներում։

Վիտվական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահությունը բարձր գնահատելով անսամբլի վարպետությունը, անսամբլի առաջավոր արտիստներին պարգևատրեց ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի պատվոգրերով գեղարվեստական հաջող գործունեության համար Ռիգայում և մյուս քաղաքներում։

Պատվոգրերի են արժանացել անսամբլի գեղարվեստական ղեկավար Թաթուլ Ալթունյանը, մենակատարներ Լուսիկ Քոչյանը և Արամայիս Ղազարյանը։

ՏՐՈԼԵՅԲՈՒՍ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երևանում արդեն իրականացվեց հետպատերազմյան ստալինյան հնգամյակով նախատեսված տրոլեյբուսի գործարկումը։ Անց է կացվել 14 հազար մետր երկարությամբ օդային գիծ։

Ներկայումս տրոլեյբուսը կապում է անընդհատ աճող քաղաքի համարյա բոլոր մասերը։

Մոտիկ ապագայում տրոլեյբուսը մայրաքաղաքը կկապի Բերիայի անվան շրջանի կենտրոնի հետ, որը գտնվում է քաղաքից յոթ կիլոմետր հեռավորության վրա։

ԱՐԺԱՆԻ ՊԱՐԳԵՎ

Հուլիսի 1-ին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Մացակ Պապյանը շքանշաններ հանձնեց մի շարք առաջավոր կոլխոզնիկների։

Լենինի շքանշան ստացան 16 մարդ, Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշան՝ 60 մարդ, Աշխատանքային արիության և Աշխատանքային գերազանցության մեդալներ՝ 254 մարդ։

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ԱՆԲԱՍԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Հուլիսի 12-ին Ղափանի Քաղաքային Գործադիր Կոմիտեում Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ Մացակ Պապյանը շքանշաններ ու մեդալներ հանձնեց Ղափանի պղնձարդյունաբերության հնագույն պղնձագործներին՝ ավելի քան 20 տարի պղնձարդյունաբերության մեջ կատարած անբասիր և արդյունավետ աշխատանքի համար։

Լենինի շքանշան ստացան երկու մարդ, Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշան՝ 27 մարդ, Աշխատանքային արիության համար մեդալ՝ 37 մարդ, Աշխատանքային գերազանցության համար մեդալ՝ 35 մարդ։

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Հայկական ՍՍՌ Կոմունալ բանկի Ախտալի բաժանմունքը 120 բանվորների և ծառայողների, այդ թվում և հայրենադարձ հայերի, հատկացրել է 160.000 ռուբլի վարկ՝ անհատական բնակարանային շինարարության համար։

Արդեն շահագործման է հանձնվել լիովին կահավորված 20 բնակարան։

ՍՈՎԵՏԱՀԱՅ ՍՊՈՐՏՍՄԵՆՆԵՐԻ ՓԱՅԼՈՒՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օգոստոսին Բուդապեշտում կայացած երիտասարդության համաշխարհային ֆեստիվալում, որին մասնակցում էին 80 երկրների ներկայացուցիչներ, Հայաստանի սպորտսմենները ձեռք բերին փայլուն հաջողություններ։

Սպորտի վարպետ մարմնամարզիկ Հրանտ Շահինյանը նվաճելով առաջնությունը, ստացավ 6 ոսկե մեդալ և 5 գավաթ։

Սպորտի վարպետ բռնցքամարտիկ Էդուարդ Արիստակեսյանը, հաղթանակ տանելով իր յոթը ախոյանների դեմ, նվաճեց համաշխարհային առաջնությունը և ստացավ շեմպիոնի ոսկե աստղ և գավաթ։

ՀԱՋՎԱԳՅՈՒՏ ՎԻՐԱՀԱՏՈՒՄ

Երևանի Առաջին հիվանդանոցի պրոսեկտորական կլինիկան բերվեց կրծքավանդակից ծանր վիրավոր մի քաղաքացի։ Պարզվեց, որ վիրավորվել է հիվանդի սիրտը և մեծ արյունահոսություն է ունեցել։

Դոցենտ Վ. Սարուխանյանը անմիջապես վիրահատում կատարեց, հերձեց կրծքավանդակը և բացահայտեց, որ ուժեղ կերպով վնասվել է ձախ սրտախորշը։

Վիրահատման պրոցեսում եղան ճգնաժամային պահեր։ Այնուամենայնիվ, տաղանդավոր վիրաբույժը հիվանդին վերադարձրեց նրա կյանքը, սիրտը կարելով 6 տեղից։ Վիրահատումը տևեց ընդամենը կես ժամ։

ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄ

Այս տարվա ութ ամիսների ընթացքում Սովետական Հայաստանի խնայողական դրամարկղները ավելի քան 11,5 միլիոն ռուբլի շահումներ են վճարել պետական փոխառությունների բաժնետերերին։

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱԼՊԱՆԻԶՄԻ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

1949 թիվը նշանավոր տարեթիվ է սովետական ալպինիզմի պատմության մեջ։ 120 տարի առաջ, 1829 թվին են առաջին անգամ բարձրացել Մեծ և Փոքր Կովկասների ամենաբարձր գագաթները՝ Էլբրուսի և Արարատի վրա։ Կաբարդին Կիլլար Խաշիրովը առաջինը բարձրացավ Էլբրուսի վրա, իսկ հայ մեծ գրող Խաչատուր Աբով-

յանը աշխարհում առաջինը ճանապարհ բացեց դեպի Արարատի գագաթը։

1829 թվի հոկտեմբերի 10-ին առաջին անգամ Արարատի գագաթին, ծովի մակերևույթից 5156 մետր բարձրության վրա մարդկային ձայներ հնչեցին և նրանց մեջ հնչեց հայ ժողովրդի մեծ զավակ Խաչատուր Աբովյանի հիանալի ձայնը։

ՆԿԱՐԻՉ Փ. ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Հայկական ՍՍՌ Պետական պատկերասրահը Մոսկվայի Հայկական Կուլտուրայի Տանը բաց արեց Հայաստանի խոշորագույն կենդանագիրներից մեկի, ժողովրդական նկարիչ Փանոս Թերլեմեզյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը։

Ցուցահանդեսի տարբեր բաժինները պատմում են մեծ արվեստագետի բարձրորակ ստեղծագործության մասին։

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՆՈՐ ԿԱԴՐԵՐ

Ընթացիկ տարում ռեսպուբլիկայի մանկավարժական ինստիտուտները տվեցին մոտ 700 ուսուցիչ շրջանավարտներ՝ հայոց և ռուսաց լեզուների, գրականության, պատմության, աշխարհագրության և այլ առարկաների մասնագետ դասատուներ։

Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրությունը երիտասարդ դասատուներին աշխատանքի ուղարկեց շրջաններն ու գյուղերը։

ՍՈՎԵՏԱՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Հունիսի 28-ին Երևանում, Նկարիչների տանը, բացվեց սովետահայ ճարտարապետության ռեսպուբլիկական ցուցահանդեսը։

Ցուցադրված 350 էքսպոնատները պատկերում են Սովետական Հայաստանի ճարտարապետության ծաղկումը, ցուցադրում ոչ միայն նրա այսօրվա օրը, այլև զարգացման լայն հեռանկարները։

Ցուցահանդեսը գրավել է լայն հասարակայնության հետաքրքրությունը։ Բացմանը ներկա էին գրողներ, նկարիչներ, գիտնականներ, գործարանների ու ֆաբրիկաների առաջավոր բանվորներ, ինչպես նաև եղբայրական ռեսպուբլիկաներից եկած հյուրերը։

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԿԱՐԱՆ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻՆ

Անհատական բնակարաններ կառուցողներին, որոնք մեծ մասամբ հայրենադարձներ են, անցած մի քանի ամիսների ընթացքում Երևանի Քաղաքային մատակարարման բաժինը բաց է թողել ավելի քան 700 խոր. մետր անտառանյութ և 20 հազար քառ. մետր ծածկի թիթեղ։

Քաղմատին կից գործում է հատուկ սղոցարան, որ սպասարկում է կառուցողներին։

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Օգոստոսի 1-ից, ռեսպուբլիկայի բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում, սկսվեց ուսանողների ընդունելությունը։ Ռեսպուբլիկայի շրջաններից ու քաղաքներից, ինչպես նաև Սովետական Միության շատ վայրերից հարյուրավոր դիմումներ են ստացվել Բուհերն ընդունելու խնդրանքով։

Երևանի Մոլոտովի անվան Պետական համալսարանն ընդունվել են 485 հոգի, իսկ ստացվել է 994 դիմում։ Համալսարանի բոլոր ֆակուլտետներում անցկացվում են կոնկուրսային քննություններ, լեզվաբանական, իրավաբանական ֆակուլտետներում, ինչպես նաև հայ գրականության և ժուռնալիստիկայի ֆակուլտետներում։

Երևանի Բժշկական ինստիտուտը պետք է ընդունվեն 200 հոգի, ստացված է 409 դիմում։ Բուժ-պրոֆիլակտիկ ֆակուլտետում, որտեղ պետք է ընդունվի 160 հոգի, կոնկուրս է գնում 337 դիմողների միջև։

341 մարդ է մասնակցում Զոովետ ինստիտուտի կոնկուրսային քննություններին այն ժամանակ, երբ այստեղ միայն 200 մարդ ընդունելու հնարավորություն կա։

Կարլ Մարքսի անվան Երևանի Պոլիտեխնիկ ինստիտուտում կազմակերպվել է լեռնային արդյունաբերության նոր ֆակուլտետ, ուր ընդունվել են 50 ուսանող։

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ստալինյան պողոտայից ուղղակի դեպի վեր՝ Քանաքեռի սարահարթի վրա բուռն թափով առաջ է գնում Հաղթանակի հուշարձանի շինարարությունը։

Հուշարձանի պատվանդանն իրենից ներկայացնելու է հայկական ոճով կառուցված մի հսկա շենք, որտեղ տեղավորվելու է Հայրենական Մեծ պատերազմի թանգարանը։

Պատվանդանն ունենալու է 35 մետր բարձրություն, որի վրա դրվելու է ժողովուրդների Մեծ առաջնորդ Ստալինի 16 մետրյա արձանը։

Հուշարձանը, որի հեղինակն է ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ, ակադեմիկոս Ս. Մերկուրովը, արդեն պատրաստ է։

Հուշարձանի բացումը կայանալու է 1950 թվին Հայաստանում սովետական իշխանության հաստատման 30-րդ տարեդարձի օրը։

5 ՄԻԼԻՈՆ ՌՈՒԲԼԻ ԵԿԱՄՈՒՏ ԲԱՄԲԱԿԻՑ

Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղի կոլխոզնիկները արժանավայել կերպով վայելում են գյուղատնտեսության առաջավորների համբավը։ Նրանց տնտեսությունն աչքի է ընկնում բարձր եկամտաբերությամբ։ Բավական է ասել, որ այս տարի կոլխոզի ստացած 7 միլիոն ռուբլի եկամտից 5 միլիոնը ստացվել է բամբակից։

Դրա շնորհիվ Բամբակաշատի կոլխոզնիկը յուրաքանչյուր աշխատանքի դիմաց կստանա 30 ռուբլի, այդ թվում և 4 կիլոգրամ հացահատիկ, ըստ որում, այդ միայն բամբակի եկամտից։

Այդ գյուղի միջին կոլխոզային ընտանիքը իր աշխատանքների դիմաց կստանա 20—25 հազար ռուբլի և ավելի քան 2,5 տոննն հացահատիկ, 40—50 կիլոգրամ բուսայուղ՝ միայն բամբակի եկամտից։

ԿՈԼԵԿՑԻՈՆ ԱՅԳԻ

Պտղաբուծության գիտա-հետազոտական ինստիտուտը կազմակերպել է մերձարևադարձային կուլտուրաների կոլեկցիոն մի մեծ այգի։

Այգու տարածությունը 20 հեկտար է։ Այստեղ տնկված են 350 տարբեր մրգատու կուլտուրաներ՝ նուշի, խնձորի, տանձի, սալորի, դեղձի և այլն սորտեր։

Այգում տնկված է միայն 57 սորտի սալորենի և 120 սորտի դեղձենի։

Կոլեկցիոն այգում աճեցվելու է նաև Հայաստանի և Սովետական Միության ռեսպուբլիկաների բոլոր սորտերի պտուղները։

ՀԻՇԱՐԺԱՆ ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՆՇՈՒՄՆԵՐ

ՌՈՒՍ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊՈՒՇԿԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ

Հայաստանի աշխատավորները հսկայական խանդավառությամբ նշեցին ռուս ժողովրդի հանճարեղ բանաստեղծ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինի ծննդյան 150-ամյակը։

Պուշկինը՝ ազատության մեծ երգիչը, ռուսական ազգային կուլտուրայի առաջավոր մարտիկը, ջերմորեն սիրված է Հայաստանի աշխատավորների կողմից։

Ամբողջ ռեսպուբլիկայում մի քանի օրվա ընթացքում անցկացվեցին մեծ բանաստեղծի կյանքին ու գործունեությանը նվիրված գիտական սեսիաներ, տանտիրություններ, կազմակերպվեցին հատուկ դասախոսություններ։

Հոբելյանի օրը Երևանի Սպենդիարյանի անվան Պետական Օպերայի և բալետի թատրոնում պարտիայի և կառավարության ղեկավարների մասնակցությամբ կայացավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Ա. Ս. Պուշկինի հիշատակին։

Մոսկվայում տեղի ունեցած Պուշկինի ստեղծագործությունների լավագույն արտասանողների ու վոկալիստների մրցության մեջ, մայրաքաղաքի ուրիշ արտիստների թվում առաջին կարգի դիպլոմի արժանացավ Հայկ. ՍՍՌ ժողովրդական արտիստ, ՍՍՌՄ-ի Մեծ թատրոնի մենակատար Պ. Լիսիցյանը։

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Հայ մեծ ողբերգակ-դերասան Պետրոս Ադամյանի ծննդյան 100-ամյակը լայնորեն նշվեց ռեսպուբլիկայում՝ ցուցադրելով հայ ժողովրդի խորին սերն ու երախտագիտությունը իր հանճարեղ զավակի նկատմամբ։

Հուլիսի 4-ին, Սունդուկյանի անվան Պետական դրամատիկական թատրոնում, կայացավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Պետրոս Ադամյանի հիշատակին։ Հանդիսավոր նիստին մասնակցում էին արվեստի, գիտության, գրականության ճակատի աշխատողներ, գործարանների ու ֆաբրիկաների առաջավոր բանվորներ և ուրիշներ։ Մեծ դերասանի կյանքի ու գործունեության մասին զեկուցեց արվեստի վաստակավոր գործիչ պրոֆեսոր Վ. Վարդանյանը։

Զեկուցումից հետո ներկայացվեցին առանձին պատկերներ «Օթելլո» և «Համլետ» ողբերգություններից, ապա տրվեց ճոխ համերգ։

ՄԵԾ ԳՐՈՂ Ա. Մ. ԳՈՐԿՈՒ ՄԱՀՎԱՆ 13-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Հուլիսի 15-ին Սովետական Հայաստանի աշխատավորները խորին վշտով նշեցին ռուս մեծագույն գրող, պրոլետարական գրականության հիմնադիր, խաղաղության և դեմոկրատիայի մեծ ջատագով Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու մահվան 13-րդ տարեդարձը։

ՄԵԾ ԿՈՄԻՏԱՍԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԸ

Սեպտեմբերի 26-ին, Երևանի Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր Պետական Օպերայի և բալետի թատրոնում կայացավ հանդիսավոր նիստ՝ նվիրված հայ մեծագույն կոմպոզիտոր Կոմիտասի հիշատակին, նրա ծննդյան 80-ամյակը նշելու կապակցությամբ։

Թատրոնի լեռներ-բերան լցված հսկայական հանդիսասրահում կարելի էր տեսնել մայրաքաղաքի ամբողջ ծաղիկը։ Այստեղ են՝ գիտնականներ, արտիստներ, նկարիչներ, գրողներ, բանվորներ, զինվորականներ, որոնք հավաքվել էին հարգելու ժողովրդական հանճարեղ կոմպոզիտորի հիշատակը։ Նիստի նախագահության մեջ են պարտիայի և կառավարության ղեկավարները։

Կոմպոզիտորի կյանքի ու գործունեության մասին զեկուցում տվեց արվեստի վաստակավոր գործիչ Ս. Գասպարյանը։

Հանդիսավոր մասից հետո տեղի ունեցավ մեծ համերգ՝ մայրաքաղաքի լավագույն արտիստական ուժերի մասնակցությամբ։

Մեծ կոմպոզիտորի հիշատակը հավերժացնելու նպատակով, հաշվի առնելով նրա մեծ ծառայությունները հայկական կուլտուրայի զարգացման գործում, Հայկական ՍՍՌ-ի Մինիստրների Սովետը որոշեց սահմանել Երևանի Պետական Կոնսերվատորիայում գերազանց ուսանողների համար երկու թոշակ՝ յուրաքանչյուրը 400 ռուբլու չափով։ Կոմիտասի անունը շնորհել Երևան քաղաքի փողոցներից մեկին, 1950 թվին Երևանում կանգնեցնել Կոմիտասի հուշարձանը։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Սեպտեմբերի 29-ին, Հայաստանի Սովետական Գրողների միության տան դահլիճում, տեղի ունեցավ հայ նշանավոր բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի մահվան 20-ամյակին նվիրված երեկո։

Բանաստեղծ Ն. Զարյանի բացման խոսքից հետո, Հ. Հովհաննիսյանի կյանքը ու ստեղծագործությունը բնութագրող զեկուցումով հանդես եկավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Վ. Պարտիզունին։ Զեկուցողն ընդգծեց այն կարևոր դերը, որ կատարել է Հ. Հովհաննիսյանը հայ նորագույն պոեզիայի հիմնադրման համար։ Զեկուցումից հետո Հ. Հովհաննիսյանի մասին իրենց հուշերով հանդես եկան Դ. Դեմիրճյանը և Ա. Կարինյանը։ Վերջում տեղի ունեցավ համերգ։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ ՇՈՊԵՆԻ ՄԱՀՎԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 16-ին, Արվեստի աշխատողների տանը, տեղի ունեցավ հանդիսավոր երեկո, նվիրված լեհ հանճարեղ կոմպոզիտոր Ֆրեդերիկ Շոպենի մահվան 100-ամյակին։ Շոպենի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցումով հանդես եկավ երաժշտա-

բան Ե. Գիլինան։ Զեկուցումից հետո տեղի ունեցավ Շոպենի ստեղծագործություններին նվիրված համերգ, դաշնակահարներ Ռ. Անդրեասյանի, Ս. Բունիաթյանի և Ա. Ամբակումյանի մասնակցությամբ։

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 120-ԱՄՅԱԿԸ

Այս տարի լրացավ հայ մեծ գրող Միքայել Նալբանդյանի ծննդյան 120-ամյակը։ Այդ կապակցությամբ՝ ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը հրատարակեց մեծ գրողի և հրապարակախոսի կարևոր աշխատություններից մի քանիսը։ Հայաստանի քաղաքներում և շրջաններում տեղի ունեցան զեկուցումներ։ Հոկտեմբերի 14-ին, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր Օպերայի և բալետի թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, որտեղ մեծ գրողի մասին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Հ. Մկրտչյանը։